

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ԹԵՍՏ 3

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակ խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

**Մաղթում ենք հաջողություն:**

## Ա մակարդակ

1 Ե՞րբ է հայերենն անջատվել հնդեվրոպական մայր լեզվից.

- 1) Ք. ա. VI հազարամյակի սկզբին
- 2) Ք.ա. VI հազարամյակի վերջին
- 3) Ք.ա. IV հազարամյակի վերջին
- 4) Ք. ա. V հազարամյակի սկզբին

2 Ե՞րբ է գահակալել Ռուսա I-ը.

- 1) Ք.ա. 786-764 թթ.
- 2) Ք.ա. 735-մոտ 710-ական թթ. վերջ
- 3) Ք.ա. մոտ 685-645 թթ.
- 4) Ք.ա. 764-735 թթ.

3 Ե՞րբ է Դարեհ III Կողոմանոսը դարձել ողջ Աքեմենյան տերության տիրակալ.

- 1) Ք.ա. 331 թ.
- 2) Ք.ա. 334 թ.
- 3) Ք.ա. 336 թ.
- 4) Ք.ա. 335 թ.

4 Ե՞րբ է կառուցվել Վաղարշապատի Ս. Էջմիածնի Մայր տաճարը.

- 1) 305 թ.
- 2) 303 թ.
- 3) 313 թ.
- 4) 301 թ.

5 Ե՞րբ է խալիֆը Աշոտ II-ին ճանաչել Հայաստանի շահնշահ.

- 1) 921 թ.
- 2) 915 թ.
- 3) 922 թ.
- 4) 925 թ.

6 Ե՞րբ է հիմնադրվել Վասպուրականի թագավորությունը.

- 1) 921 թ.
- 2) 915 թ.
- 3) 908 թ.
- 4) 963 թ.

7 Ե՞րբ է կնքվել ռուս-անգլիական համաձայնագիրը.

- 1) 1878 թ. փետրվարի 19-ին
- 2) 1878 թ. մայիսի 18-ին
- 3) 1878 թ. մայիսի 25-ին
- 4) 1878 թ. հունիսի 1-ին

8 Ե՞րբ է ստեղծվել «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը.

- 1) 1879 թ.
- 2) 1874 թ.
- 3) 1881 թ.
- 4) 1882 թ.

9 Ո՞րն է ՀՀ-ի ամենաբարձր լեռնագագաթը.

- 1) Փոքր Արարատ
- 2) Միփան
- 3) Արագած
- 4) Կապուտջուղ

10 Որքա՞ն էր Մեծ Հայքի տարածքը.

- 1) 80 հազ. քառ.կմ
- 2) 311 հազ. քառ. կմ
- 3) 250 հազ. քառ.կմ
- 4) 411 հազ.քառ.կմ

11 Ո՞ր եկեղեցին է Գրիգոր Լուսավորիչը հիմնադրել Աշտիշատում.

- 1) Ս. Ամենափրկիչ
- 2) Իննականյան Ս. Կարապետ
- 3) Ս. Փրկիչ
- 4) Ս. Երրորդություն

12 Մեծ Հայքի ո՞ր նահանգում էր Ոստան Հայոց գավառը.

- 1) Վասպուրական
- 2) Սյունիք
- 3) Գուգարք
- 4) Այրարատ

13 Սյունիքի մելիքները Իսրայել Օրուն ուղեկցող կարգեցին.

- 1) Մելիք Սաֆրազին
- 2) Մինաս վարդապետ Տիգրանյանին
- 3) Մահտեսի Շահմուրատին
- 4) Սյունիքի մելիք Իսրայելին

14

Որքա՞ն է եղել Գանձակի մոտակա Չոլակ վայր Արցախից ժամանած

հայկական զորքի թիվը.

- 1) 6 000
- 2) 10 000
- 3) 12 000
- 4) 15 000

15

Ո՞վ է Մաղրասի հայկական տպարանի հիմնադիրը է.

- 1) Մովսես Սարաֆյան
- 2) Գրիգոր Խոջաջանյան
- 3) Շահամիր Շահամիրյան
- 4) Մովսես Բաղրամյան

16

ՀՀ զինանշանի հեղինակներն էին.

- 1) Վարդգես Սուրենյանցը և Հակոբ Կոչոյանը
- 2) Հակոբ Կոչոյանը և Ալեքսանդր Թամանյանը
- 3) Ալեքսանդր Թամանյանը և Մարտիրոս Սարյանը
- 4) Մարտիրոս Սարյանը և Հակոբ Կոչոյանը

17

Ո՞ր արքային են վերագրվում հետևյալ խոսքերը.

*«Նա Կյուրոսին աջակից եղավ Մարաց իշխանությունը տապալելու... և մեր բնակության սահմաններն հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը»:*

- 1) Տիգրան I Երվանդյանին
- 2) Երվանդ Սակավակյացին
- 3) Երվանդ III-ին
- 4) Արտավազդ II-ին

18

Ո՞ր պատմիչի աշխատությունից են մեջբերված խոսքերը.

*«Այժմ, երբ ինձ տեսնում ես կարճահասակ, մեծությանս չափը չես հասկանում, որովհետև մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ աղվես»:*

- 1) Բուզանդ
- 2) Խորենացի
- 3) Մեթոս
- 4) Փարպեցի

19

Աշակունյաց շառավիղներից ձևավորված առանձին խավը կոչվում էր՝

- 1) բդեշխներ
- 2) ասպետներ

- 3) թագադիրներ
- 4) ոստանիկներ

20

**Չեղոններ կոչվել են՝**

- 1) քրդական հակակառավարական ջոկատները
- 2) Արևմտյան Հայաստանի ժողովրդական վրիժառուները
- 3) Համիդիե ջոկատների զինյալները
- 4) Բալկաններից Արևմտյան Հայաստան ներթափանցած մահմեդականները

21

**Գտնել սխալ պատասխանը.**

*Ի՞նչ հետևանք ունեցան Տիգրան Մեծի նվաճումները.*

- 1) Հայկական պետության սահմանները հասան Եգիպտոս:
- 2) Սելևկյան Ասորիքն ու Պարթևստանը տարածաշրջանում իրենց դիրքերը զիջեցին Հայաստանին:
- 3) Տիգրան Մեծը դարձավ Առաջավոր Ասիայի մեծագույն մասի տիրակալ:
- 4) Հայաստանն ամրապնդվեց Միջերկրական ծովի արևմտյան ափերին:

22

**Բագրատունիների օրոք Դվինն ինչո՞ւ մայրաքաղաք չդարձավ.**

- ա) Այն գտնվում էր Շիրակում և, ընկած լինելով ծայրամասային գավառում, համահայկական մայրաքաղաքի գործառույթներ չէր իրականացնում:
  - բ) Դվինը շարունակում էր մնալ արաբների ձեռքին:
  - գ) Դվինը Բագրատունիների հիմնական տիրույթներից՝ Շիրակից, դուրս էր գտնվում:
  - դ) Դվինը չորս կողմից ողողում էին Արաքսի ջրերը, և նպատակահարմար չէր մայրաքաղաք դարձնել:
  - ե) Դվինը երկրաշարժից ավերվել էր և անմարդաբնակ դարձել:
- 1) ա, դ
  - 2) բ, գ
  - 3) բ, ե
  - 4) ա, գ

23

**Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա. Սարգուրի III-ի հիշատակումն ասորեստանյան արձանագրություններում
- բ. հայկական նոր թագավորության հռչակումը Պարույր Հայկազունու գլխավորությամբ
- գ. Տուշպա մայրաքաղաքի հիմնադրումը
- դ. Թիզլաթպալասար III-ի արշավանքը Տուշպա

- 1) բ, գ, դ, ա
- 2) դ, գ, բ, ա

3) գ, ա, դ, բ

4) գ, դ, ա, բ

24

**Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. դավաճաններ Դատաբեն Բզնունու և Բակուր բղեշխի մահապատիժը

բ. Հուսիկ կաթողիկոսի ձեռնադրությունը

գ. քրիստոնեական եկեղեցու «Հավատո հանգանակի» ընդունումը

դ. Տիրան թագավորի բնակության հաստատումը Կուաշում

ե. Վաչե Մամիկոնյան սպարապետի և իր զինակիցների նահատակությունը

զ. մագքուղների կողմից Վաղարշապատի գրավումը

1) գ, գ, ա, ե, բ, դ

2) գ, գ, ե, ա, դ, բ

3) ա, գ, գ, ե, դ, բ

4) գ, գ, ա, բ, ե, դ

25

**Համապատասխանեցնել.**

*Պատմական Հայաստանի ո՞ր գավառներում են տեղի ունեցել ներքոնշյալ իրադարձությունները.*

ա. Արիստակես կաթողիկոսի հուղարկավորությունը

բ. Հայ եկեղեցու առաջին ժողովը

գ. Արշակունի թագավորների դամբարանների թալանը պարսից զորքի կողմից

դ. Ջիրավի ճակատամարտը

ե. Արշակավանի հիմնումը

1) Նիգ

2) Բագրևանդ

3) Եկեղյաց

4) Տարոն

5) Կոզովիտ

6) Դարանաղյաց

1) ա-1, բ-4, գ-3, դ-5, ե-2

2) ա-3, բ-4, գ-6, դ-5, ե-2

3) ա-3, բ-4, գ-6, դ-2, ե-5

4) ա-1, բ-6, գ-3, դ-2, ե-5

26

**Տարեթվերը համապատասխանեցնել իրադարձություններին.**

1. 1699
2. 1724
3. 1663
4. 1727
5. 1771

ա. Հայկական տպարանի հիմնումը Մադրասում  
 բ. Իսրայել Օրու ժամանումը Պարսկաստան  
 գ. Երևանի հերոսական պաշտպանությունը  
 դ. Անգեղակոթի գաղտնի խորհրդակցությունը  
 ե. Խաչատուր Գաղատացի կաթողիկոսի նամակը Լյուդովիկոս XIV-ին  
 զ. Հալիձորի ճակատամարտը

- 1) 1-ա, 2-բ, 3-ե, 4-գ, 5-դ
- 2) 1-բ, 2-գ, 3-ե, 4-դ, 5-ա
- 3) 1-դ, 2-ա, 3-գ, 4-գ, 5-բ
- 4) 1-դ 2-գ, 3-ե, 4-գ, 5-ա

27

**Ո՞ր շարքի մայրաքաղաքներն են գտնվել Այրարատ նահանգում.**

- 1) Երևան, Անի, Արտաշատ, Դվին, Արմավիր, Կարս, Վաղարշապատ, Երվանդաշատ, Վան, Բագարան
- 2) Արմավիր, Բագարան, Արտաշատ, Երվանդաշատ, Վաղարշապատ, Կարս, Տիգրանակերտ, Անի, Դվին, Երևան
- 3) Երևան, Անի, Արտաշատ, Դվին, Արմավիր, Վան, Երազգաորս, Վաղարշապատ, Երվանդաշատ, Բագարան
- 4) Արմավիր, Բագարան, Արտաշատ, Երվանդաշատ, Վաղարշապատ, Կարս, Երազգաորս, Անի, Դվին, Երևան

28

**Խորհրդային կառավարությունը ե՞րբ պաշտոնապես հայտարարեց, որ Թուրքիայից ոչ մի տարածքային պահանջ չունի.**

- 1) 1951 թ. մարտի 19-ին
- 2) 1952 թ. հուլիսի 30-ին
- 3) 1953 թ. մարտի 5-ին
- 4) 1953թ. մայիսի 30-ին

29

**Ե՞րբ են ՀՀ-ում անցկացվել առաջին նախագահական ընտրությունները.**

- 1) 1991 թ. մարտի 1-ին
- 2) 1991 թ. սեպտեմբերի 21-ին
- 3) 1991 թ. սեպտեմբերի 23-ին
- 4) 1991 թ. հոկտեմբերի 16-ին

30

**Ո՞վ էր Գաբրիել Սունդուկյանի անվան պետական դրամատիկական թատրոնի**

**առաջին գլխավոր ռեժիսորը.**

- 1) Վարդան Աճեմյանը
- 2) Լևոն Քալանթարյանը
- 3) Վաղարշ Վաղարշյանը
- 4) Հովհաննես Աբելյանը

31

**Ո՞ւմ ջանքերով վերականգնվեց Զվարթնոց տաճարի հասակագիծը.**

- 1) Ալեքսանդր Թամանյանի
- 2) Մարկ Գրիգորյանի
- 3) Թորոս Թորամանյանի
- 4) Կարո Հալաբյանի

32

**Ո՞ր բերդի պաշարման ժամանակ են Մխիթար սպարապետն ու տեր Ավետիսը հետևյալ խոսքերով դիմել հայ զինվորներին.**

*«Արիացե՛ք, մի՛ երկնչեք, հետևեցե՛ք մեզ: Եթե հասել է մեր վախճանը, քաջաբար մեռնենք, որովհետև մեզ համար ավելի լավ է արիությամբ պարիսպներից դուրս մեռնել, քան այստեղ՝ մեր աչքերի առաջ, տեսնել մեր ընտանիքների ու բարեկամների մահը»:*

- 1) Ջևայի
- 2) Որոտանի
- 3) Հալիձորի
- 4) Տաթևի

33

**Ե՞րբ է ընդունվել պատմական այս որոշումը.**

*«Ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին՝ խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ խոր ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իրձերին և ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ հանձնելու հարցի դրական լուծմանը»:*

- 1) 1988 թ. հունիսի 15-ին
- 2) 1989 թ. դեկտեմբերի 1-ին
- 3) 1988 թ. փետրվարի 20-ին
- 4) 1990 թ. օգոստոսի 23-ին

34

**Ո՞վ էր Աստղիկը հայոց դիցարանում.**

- 1) երկնային լույսի, սիրո և գեղեցկության դիցուհին
- 2) պտղաբերության և մայրության դիցուհին
- 3) ռազմի դիցուհին
- 4) հյուրասիրության աստվածուհին



35

**Ի՞նչ կարևոր հետևանք ունեցավ Դվինի II ժողովի գումարումը**

- 1) Հայ առաքելական եկեղեցին վերջնականապես ազատվեց կաթոլիկ եկեղեցու հոգևոր ենթակայությունից:
- 2) Վերջնականապես հաստատվեց Հայ առաքելական եկեղեցու ազգային ինքնուրույնությունը:
- 3) Հայ առաքելական եկեղեցին դարձավ ուղղափառ եկեղեցու առաջնորդը:
- 4) Հայ եկեղեցին համաձայնեց ընդունել Քաղկեդոնի ժողովի որոշումները:

36

**1918 թ. տեղի ունեցած իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա. Դրոյի առաջին հաղթական մարտը Բաշ Ապարանում
- բ. Սարդարապատի գրավումը թուրքական զորքի կողմից
- գ. Ալեքսանդրապոլի գրավումը թուրքական զորքի կողմից
- դ. Ղարաքիլիսայի ճակատի կազմակերպումը
- ե. Սարիղամիշի գրավումը թուրքական զորքի կողմից

- 1) ե, գ, բ, ա, դ
- 2) գ, ե, բ, դ, ա
- 3) դ, ե, բ, գ, ա
- 4) գ, ե, դ, բ, ա

37

**Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա. Ախալքալաքի գավառի ամրագրումը Վրաստանին
- բ. Ա. Ահարոնյանի մեկնումը Թուրքիա՝ Բաթումի հաշտության պայմանների վերանայման նպատակով
- գ. Խորհրդային Ռուսաստանի զորքերի օգնությամբ Խորհրդային Ադրբեջանի՝ Լեռնային Ղարաբաղին տիրելը
- դ. Լոռու գավառի համար հայ-վրացական պատերազմը

- 1) գ, դ, ա, բ
- 2) բ, գ, դ, ա
- 3) գ, դ, բ, ա
- 4) բ, դ, գ, ա

38

**Կատարել համարժեք անունների համապատասխանեցում.**

- |               |                  |
|---------------|------------------|
| 1) Ծովք       | ա. Արմենիա մայր  |
| 2) Բարձր Հայք | բ. Կարնո աշխարհ  |
| 3) Մեծ Հայք   | գ. Տնորիք        |
| 4) Փոքր Հայք  | դ. Չորրորդ Հայք  |
| 5) Կորձայք    | ե. Արմենիա մինոր |
|               | զ. Կորդուք       |

- 1) 1-դ, 2-բ, 3-ա, 4-ե, 5-գ
- 2) 1-ե, 2-ա, 3-դ, 4-բ, 5-գ
- 3) 1-գ, 2-ե, 3-ա, 4-բ, 5-դ
- 4) 1-դ, 2-գ, 3-գ, 4-ե, 5-ա

39

**Ընտրել առաջին տիեզերական ժողովի հետ կապված հասկացությունները.**

- 1) Միլանի հրովարտակ
- 2) Հավատո հանգանակ
- 3) Աշտիշատի եկեղեցական կանոններ
- 4) Նիկեական կանոններ
- 5) Հավատո ուխտ

40

**Որո՞նք էին 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի հետևանքները ռուսահպատակ դարձած հայերի համար.**

- 1) Նրանք ստացան կյանքի և գույքի ապահովություն:
- 2) Հռչակեցին անկախ պետականություն Ռուսաստանի հովանու ներքո:
- 3) Կրկին բնակեցրին նկատելիորեն հայաթափված Արևելյան Հայաստանի տարածքը:
- 4) Ազատվեցին ազգային-գաղութային ճնշումներից ու հալածանքներից:
- 5) Ազատվեցին սոցիալական հալածանքներից:

41

**Թվարկվածներից ովքե՞ր են մշակել ու հրատարակել «Մասունցի Դավիթ» էպոսի համահավաք տեքստը.**

- 1) Հրաչյա Աճառյանը
- 2) Գրիգոր Ղափանցյանը
- 3) Մանուկ Աբեղյանը
- 4) Լեոն
- 5) Կարապետ Մելիք-Օհանջանյանը
- 6) Գարեգին Սրվանձտյանը

42

**Տրված իրադարձություններից ո՞րն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Հելլենիզմի դարաշրջանի սկիզբն Առաջավոր Ասիայում
- 2) Մելնկյան պետության առաջացումը
- 3) Հայկազունիների Երվանդական ճյուղի իշխանության վերացումը Մեծ Հայքում
- 4) Մամոսատ մայրաքաղաքի կառուցումը
- 5) Արշամաշատ քաղաքի կառուցումը

43

**Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Փիլարտոս Վարաժնունու իշխանության հիմնումը
- 2) Զմանկատուկի ճակատամարտը

- 3) Անտիոքի իշխանի և Լևոն II իշխանի միջև հաշտության պայմանագրի կնքումը
- 4) Հայ իշխան Ռուբենի ամրանալը Կոռոմոզոլ բերդում
- 5) Լևոն Մեծագործի կողմից Անտիոքի իշխանության հանձնումը Ռայմոնդ-Ռուբենին

--	--	--	--	--

44 **Կատարել համապատասխանեցում.**

- ա. Մահտեսի Շահմուրատի ժամանումը Փարիզ
- բ. Հակոբ Ջուղայեցու կաթողիկոսի գլխավորությամբ պատվիրակության ժամանումը Կ. Պոլիս
- գ. Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի բանակցությունները Ռեչ Պոսպոլիտայի թագավոր Յան Սոբեսկու հետ
- դ. Օսմանյան կայսրության և Վենետիկի հանրապետության միջև պատերազմի սկիզբը
- ե. Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի գլխավորությամբ գաղտնի ժողովի գումարումը Էջմիածնում

- 1) 1645 թ.
- 2) 1666 թ.
- 3) 1672 թ.
- 4) 1677 թ.
- 5) 1678 թ.
- 6) 1679 թ.

Ա	բ	Գ	դ	ե

45 **«Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» պատմական փաստաթղթին վերաբերող ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Այս հիմնարար փաստաթուղթը բաղկացած է 12 հոդվածից, նախանշում էր Հայաստանի տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացման ուղիները:
- 2) Եթե ՀՀ օրենքը չէր հաստատվում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից, ապա այն չէր գործելու Հայաստանում:
- 3) Հայաստանը պետք է ունենար իր մասնաբաժինը ԽՍՀՄ զինված ուժերի սպառազինությունից:
- 4) Հռչակագրի մշակութային բաժնում հատուկ ուշադրություն էր հատկացվում պետական լեզվի հիմնահարցին. հանրապետությունում ամբողջ գործավարությունը կատարվելու էր միայն հայերենով:

- 5) Երկրի տնտեսության հիմքում դրվում էին կոլեկտիվ սեփականատիրական և ազատ շուկայական հարաբերությունները:
- 6) Հռչակագիրը հաստատում էր ՀՀ վճռականությունն Արցախի իր տարածքի անբաժանելի մասը ճանաչելու վերաբերյալ:

## Բ մակարդակ

46

**Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- ա. Դեռ Գավգամելայի ճակատամարտից առաջ Հայաստանում գոյություն ունեցող վարչական երկու մեծ միավորներն էին Մեծ Հայքը և Փոքր Հայքը:
- բ. Հայկազուն-Երվանդունիների գահակալության սկզբնական ժամանակաշրջանում երկրի արքան հայտնի էր «Արքայից արքա» տիտղոսով:
- գ. Մակեդոնացու արշավանքներից հետո Արևելքում սկսած ժամանակաշրջանը հայտնի է «հելլենիստական անունով»:
- դ. Ք. ա. IV-II դարերում Հայաստանի թագավորը կրում էր «Տիեզերական արքա» տիտղոսը:
- ե. Հին Հայաստանում քրմապետը նաև երկրի Մեծ դատավորն էր:

- 1) ա, գ, դ
- 2) բ, գ, ե
- 3) գ, ե
- 4) բ, դ

47

**Գտնել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- ա. Ամբողջ միջնադարի ընթացքում միայն Վասպուրականի հայ բնակչության հոգևոր կյանքը կարգավորող նվիրապետական աթոռը կոչվում էր Աղթամարի կաթողիկոսություն:
- բ. Գեղարդավանքը ահռելի ժայռի մեջ փորված լինելու համար հայտնի է նաև Այրիվանք անունով:
- գ. Կիլիկյան Հայաստանի արքունիքի մեջ մտնող մարմիններից մեկը կոչվում էր երկրախորհուրդ:
- դ. Ջորահրամանատարներ նշանակված մելիքական տան կրտսեր ներկայացուցիչները կոչվում էին բեյ, սարդար:
- ե. Միջնադարյան վարդապետարանները բարձրագույն տիպի դպրոցներ էին:
- զ. Սուլթանի անձնական գվարդիայում ծառայող գնված ստրուկներին կոչում էին մամլուքներ:
- է. Միայն պաշտամունքային, եկեղեցական շինություններից բաղկացած համալիրները կոչվում են վանական:

- 1) ա, բ, է
- 2) գ, դ, զ
- 3) բ, է, զ
- 4) ա, դ, է

**Թվարկվածներից որո՞նք են արտացոլում 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի հետևանքները.**

- ա. Արևելյան Հայաստանի ևս մի մեծ հատված՝ Երևանի և Նախիջևանի խանությունները, անցան Ռուսաստանին:
- բ. Ռուսական իշխանություններն արագորեն բնակեցրին Արևելյան Հայաստանը ռուս կազակներով:
- գ. Ռուսաստանը Պարսկաստանին վերադարձրեց Արաքսից հարավ ընկած պատմական Պարսկահայքը և Ատրպատականի տարածքները:
- դ. Պատերազմի արդյունքները գոհունակությամբ չընդունվեցին արևմտահայերի կողմից:
- ե. Պարսկական տիրապետությունից ազատագրվելու արևելահայության հույսերը չարդարացան:
- զ. Տասնյակ հազարավոր հայեր, չկամենալով մնալ պարսկական տիրապետության տակ, 1828 թ. գարնանից սկսեցին վերաբնակվել Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին անցած տարածքներում:
- է. Պատերազմի ավարտից հետո Արևմտյան և Արևելյան Հայաստանները վերամիավորվեցին:

- 1) գ, գ, է
- 2) ա, գ, գ
- 3) բ, է, է
- 4) ա, է, դ

**Նեպի քաղաքականության ձախողման և դրանից հրաժարվելու պատճառներ են հանդիսացել.**

- ա. Պետության կողմից տարեցտարի մեծացող միջամտությունը երկրի տնտեսական կյանքին
- բ. բանվոր դասակարգի և ճարտարագիտատեխնիկական անձնակազմի քանակական աճը
- գ. բռնաճնշումների և հարկադրական կոլեկտիվացման քաղաքականությունը
- դ. Գների վերահսկումը, ձեռնարկությունների ինքնուրույնության սահմանափակումը
- ե. ներկուսակցական պայքարն ու անհատի պաշտամունքի քննադատությունը
- է. տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորումը
- ը. ռազմական կոմունիզմի ժամանակների գործելակերպի վերակենդանացումը
- թ. կառավարման վարչահրամայական եղանակին անցում կատարելը

- 1) բ, գ, դ, գ
- 2) ա, գ, է, ը
- 3) բ, դ, է, թ
- 4) ա, դ, ը, թ

**Ռեպրերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա. Արդիշտի I-ի գահակալման սկիզբը
- բ. Արտաշես I-ի հողային բարեփոխումների մասին հրամանագրի հրապարակումը
- գ. Տրդատ II-ի գահակալության վերջը
- դ. Պետոս զորավարի մուտքը Հայաստան
- ե. Արեգ-Միհրի տաճարի կառուցումը Գառնիում
- զ. Վաղարշ I-ի գահակալման սկիզբը
- է. Տիգրան Երվանդյանի մահը
- ը. Աքեմենյան տերության բաժանումը 20 վարչական միավորների
- թ. հռոմա-պարթևական տասնամյա պատերազմի ավարտը
- ժ. Արտաշեսյան թագավորության կործանումը

- 1) ա, է, ը, բ, ժ, թ, գ, ե, դ, զ
- 2) ը, ա, է, ժ, բ, թ, ե, դ, գ, զ
- 3) ա, է, ը, բ, ժ, դ, թ, ե, գ, զ
- 4) ը, ա, է, բ, ժ, ե, դ, թ, գ, զ

**Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել վերջինը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

- ա. Հայոց գրերի գյուտը
- բ. Հագարապետ Վահան Ամատունու պաշտոնագրկումը և փոխարինումը պարսիկ պաշտոնյայով
- գ. Սահակ Պարթևի գրկվելը կաթողիկոսությունից
- դ. Մուշեղ Մամիկոնյանի դավադիր սպանությունը
- ե. Բատ Սահառունու մահապատիժը
- զ. Վարազդատ Արշակունու գահակալության սկիզբը
- է. Արտաշես Արշակունու գահակալության ավարտը
- ը. Մամիկոնյան տոհմի տանուտերության և սպարապետության գործի ստանձնումը Մանվել Մամիկոնյանի կողմից
- թ. Շահապիվանի եկեղեցական ժողովի գումարումը
- ժ. Վարազդատ Արշակունու գահազրկումը

1. բ
2. գ
3. է
4. թ

**Առաջին աշխարհամարտի տարիներին տեղի ունեցած իրադարձությունները դասավորել ըստ ժամանակագրական հաջորդականության.**

- ա. օսմանյան բանակ զորակոչված հայ զինվորների զինաթափման սկիզբը
- բ. Էրզրումի գրավումը ռուսական բանակի կողմից

- գ. Վանի ռուսական գորախմբի անսպասելի նահանջը
- դ. Դիլմանի ճակատամարտը
- ե. Գերմանական երկու ռազմանավերի հարձակումը ռուսական նավահանգիստների վրա
- զ. Սարիղամիշի ճակատամարտի ավարտը
- է. Էնվերի փախուստը Կ. Պոլիս

- 1) ե, գ, է, ա, դ, զ, Բ
- 2) գ, է, է, գ, Բ, ա, դ
- 3) ե, գ, է, դ, ա, զ, Բ
- 4) գ, է, է, գ, դ, Բ, ա

53 **Կատարել համապատասխանեցում.**

**Տարեթվեր**

- 1) 1920 թ. մայիսի 30
- 2) 1921 թ. հոկտեմբերի 13
- 3) 1920 թ. նոյեմբերի 13
- 4) 1918 թ. հունիսի 4
- 5) 1920 թ. օգոստոսի 10
- 6) 1921 հոկտեմբերի 20
- 7) 1920 թ. հոկտեմբերի 28
- 8) 1921 թ. մարտի 16
- 9) 1918 թ. մարտի 3

**Ստորագրված միջազգային փաստաթղթեր**

- ա. Կարսի պայմանագիրը
- բ. Բաթումի հաշտության պայմանագիրը
- գ. Անկարայի ֆրանս-թուրքական զինադադարի համաձայնագիր
- դ. Անկարայի ֆրանս-թուրքական պայմանագիր
- ե. հայ-վրացական համաձայնագիր՝ «Լոռու չեզոք գոտի» վրացական զորքեր մտցնելու մասին
- զ. Թիֆլիսի հայ-ռուսական համաձայնագիր
- է. խորհրդա-քեմալական «Սրտագին և անկեղծ բարեկամության» պայմանագիր
- ը. հայ-ռուսական «Եզրափակիչ որոշման արձանագրություն»
- թ. Մոսկվայի «Ռուս-թուրքական բարեկամության և եղբայրության» պայմանագիր
- ժ. Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիր

- 1) 1-գ, 2-դ, 3-է, 4-բ, 5-զ, 6-ա, 7-ը, 8-է, 9-թ
- 2) 1-գ, 2-ա, 3-է, 4-բ, 5-զ, 6-դ, 7-ը, 8-թ, 9-ժ
- 3) 1-դ, 2-ա, 3-զ, 4-է, 5-բ, 6-ը, 7-զ, 8-թ, 9-ժ
- 4) 1-դ, 2-ը, 3-զ, 4-ժ, 5-զ, 6-է, 7-է, 8-թ, 9-բ



**Ընտրեք ճիշտ պնդումները.**

- ա. Ք. ա VII դարի առաջին կեսին Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում վերականգնված Հայկագունիների իշխանությունը համապատասխանում է սեպագիր աղբյուրների Արմե-Շուքրիա պետական կազմավորմանը:
- բ. Ք. ա. 609 թ. Վանն արդեն Պարույր նահապետի իշխանության տակ էր:
- գ. Տիգրան Երվանդյանին հաջորդել է նրա որդի Վրույրը:
- դ. Հայերի ապստամբությունը ճնշելու համար Դարեհ I-ը ուղարկել է պարսիկ զորավար Վեհմիհրշապուհին:
- ե. Ըստ պատմահոր հաղորդման՝ Պարույր նահապետը միավորել է Սևանա լճից մինչև Տիգրիս ընկած ողջ տարածքը:
- զ. Տիգրան Երվանդյանը մտերիմ հարաբերություններ ուներ պարսից արքա Կյուրոս Կրտսերի հետ:
- է. Ք. ա. 580-570-ական թթ. նշանավոր դարձած Երվանդ I Սակավակյացի անունով նոր արքայատոհմը կոչվել է Երվանդական, Երվանդյան կամ Երվանդունի:

- 1) ա, բ, է
- 2) գ, դ, զ
- 3) ա, գ, է
- 4) բ, դ, է

**Թվարկված պայմաններից որո՞նք են ճիշտ արտահայտում Դամասկոսում կնքված հայ-արաբական դաշնագրի բովանդակությունը.**

- ա. Հայաստանի ամրոցներում արաբները տեղակայելու էին իրենց կայազորները:
- բ. Բյուզանդացիների ներխուժման դեպքում խալիֆայությունն այնքան զորք էր ուղարկելու, որքան կամենային հայերը:
- գ. Հայաստանում գանձվող հարկի հաշվին հայերը պահելու էին 25-հազարանոց այրուձի:
- դ. Խալիֆայությունն առնվազն տասը տարի Հայաստանից հարկ չէր գանձելու:
- ե. Հայաստանում գանձվող հարկի հաշվին պահվող այրուձին պետք է պատրաստ լիներ գործելու այլ տեղերում:
- զ. Պարսիկների ներխուժման դեպքում նույնպես խալիֆայությունն այնքան զորք էր ուղարկելու, որքան պահանջեին հայերը:
- է. Արաբական խալիֆայությունն առնվազն երեք տարի Հայաստանից հարկ չէր գանձելու, իսկ դրանից հետո հայերը վճարելու էին այնքան, որչափ կամենային:

- 1) ա, գ, է
- 2) բ, դ, զ
- 3) բ, է, է

4) ա, ե, գ

56

**Բերված փաստերից ընտրել երեքը, որոնք տեղ են գտել «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գրքում.**

ա. Ներկայացված է ապագա պետության կառավարման համար նախատեսված օրենքների հավաքածու:

բ. Ներկայացված է խորհրդարանական հանրապետություն ստեղծելու ծրագիր:

գ. Ներկայացված է ապագա պետության բարձրագույն գործադիր իշխանության կառուցվածքը:

դ. Ներկայացված են հայ ժողովրդի հերոսական անցյալը, նրա աշխարհագրական լայնարձակ սահմանները:

ե. Ներկայացված է ապագա պետության բարձրագույն օրենսդիր իշխանության կառուցվածքը:

զ. Գիրքը կոչ է անում հայ երիտասարդներին դուրս գալու օտար բռնակալների դեմ և զենքի ուժով հասնելու ազատության:

է. Քննադատվում է միապետական կարգը՝ այն համարելով հայոց պետականության անկման պատճառներից մեկը:

1) գ, դ, ե

2) դ, գ, է

3) բ, գ, է

4) ա, գ, է

57

**Կատարել համապատասխանեցում.  
Տարեթիվ**

1) 1921 թ. ապրիլի 14

2) 1921 թ. հունիսի 1

3) 1921 թ. դեկտեմբեր

4) 1921 թ. հունիսի 12

5) 1922 թ. դեկտեմբերի 10-13

6) 1923 թ. հուլիսի 7

**Իրադարձություն**

ա. Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ստեղծումը

բ. ԽՍՀՄ կազմավորումը

գ. Լեոնահայաստանի վերանվանումը Հայաստանի Հանրապետություն

դ. ՀՄԽՀ խորհուրդների առաջին ընտրությունները

ե. Վ. Լենինը նամակը Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կոմունիստներն

զ. Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարը

է. «Լեոնային Ղարաբաղը Հայաստանին պատկանելու» մասին ՀՄԽՀ Ժողկոմխորհի հայտարարության հրապարակումը

- 1) 1-ե, 2-գ, 3-դ, 4-է, 5-զ, 6-ա
- 2) 1-դ, 2-գ, 3-ա, 4-է, 5-է, 6-բ
- 3) 1-դ, 2-գ, 3-է, 4-է, 5-զ, 6-ա
- 4) 1-ե, 2-գ, 3-դ, 4-բ, 5-է, 6-ա

58

**Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- 1) Հունահռոմեական հեղինակները Արտաշես I-ի ստեղծած վարչամիավորներն անվանում են ստրատեգիա:
- 2) Հունահռոմեական հեղինակները Արտաշես I-ի ստեղծած վարչամիավորներն անվանում են կուսակալություն:
- 3) Հունահռոմեական հեղինակները Արտաշես I-ի ստեղծած վարչամիավորներն անվանում են սատրապություն:
- 4) Զրադաշտական կրոնի սպասավորները կոչվում էին մոզ:
- 5) Զրադաշտական կրոնի սպասավորները կոչվում էին քուրմ:
- 6) Աքեմենյան տիրապետության օրոք Հայաստանի արևմտյան մասի կառավարիչը կոչվում էր սատրապ:
- 7) Աքեմենյան տիրապետության օրոք Հայաստանի արևմտյան մասի կառավարիչը կոչվում էր հյուպարքոս:

59

**Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- 1) Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումից հետո Բարձր Հայք նահանգը հայտնի էր «Մասն Մեծ Հայոց» անունով:
- 2) Հերթ ոստիկանի «աշխարհագրով» մտցված ըստ գերդաստանների՝ երդերի, ոչ մահմեդականներից գանձվող հարկը կոչվում էր ծխահարկ:
- 3) Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումից հետո Այրարատ նահանգի մեծ մասից կազմված վարչական միավորը կոչվեց «Ներքսագույն Հայք»:
- 4) Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումից հետո Տուրուբերան նահանգը հայտնի էր «Մեծ Հայք» անունով:
- 5) Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումից հետո Տուրուբերան նահանգը հայտնի էր «Ներքին Հայք» անունով:
- 6) Պարսից արքայի և բյուզանդական կայսեր միջև 363 թ. կնքված պայմանագիրը անվանել են «ամոթալի»:
- 7) Նախարարական տների կրտսեր իշխանները կոչվում են ոստանիկներ:

60

**Թվարկվածներից որո՞նք Հայոց մեծ եղեռնի պատճառ չեն.**

- 1) Հայերի հայրենագրկման և ոչնչացման ծրագիրը
- 2) Միացյալ և անկախ Հայաստան ստեղծելու ռուսների ծրագիրը
- 3) Հայկական հարցին մեկընդմիջտ վերջ տալու երիտթուրքերի ձգտումը

- 4) հայ քաղաքական կուսակցությունների՝ Հայաստանի միավորման ծրագրի ձևափոխումը
- 5) հայ արդյունաբերողների և դրամատների մրցակցությունից ազատվելը
- 6) Անտանտի Անդրկովկասում հավատարիմ դաշնակցից զրկելը
- 7) Հայության ֆինանսական և նյութական ունեցվածքին տիրանալը

61

**Արցախյան հիմնախնդրի շուրջ տարվող աշխատանքների արդյունքում՝**

- 1) Արցախյան հիմնախնդիրը Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) քննարկման առարկա դարձավ 1992 թ. հունվարից, երբ ՀՀ-ն անդամակցեց ԵԱՀԿ-ին:
- 2) ԵԱՀԿ ձևաչափով ստեղծվել է արցախյան հիմնախնդրի լուծման հիմնական կառույցը՝ ԵԱՀԿ Մինսկի խումբը՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Գերմանիայի համանախագահությամբ:
- 3) 1995 թ. վերջին ԵԱՀԿ Լիսաբոնի գազաթնաժողովում փորձ արվեց Արցախյան հիմնախնդրի լուծումը կապել Ադրբեյջանի տարածքային ամբողջականության հետ:
- 4) ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերով 1999 թ. սկսվեցին Հայաստանի և Ադրբեյջանի նախագահների ուղղակի շփումները, որոնք շարունակվում են մինչև այժմ:
- 5) ՀՀ-ի համար խնդրի կարգավորման հիմքը շարունակում է մնալ պետությունների տարածքային ամբողջականության պահպանման իրավունքի ամրագրումը:
- 6) 1995 թ. մայիսի 12-ի զինադադարից հետո սկսվեց ԼՂՀ հակամարտության կարգավորման քննակցային փուլը:
- 7) 1993 թ. ընթացքում ԼՂՀ խնդրով ՄԱԿ-ում ընդունվել է երեք բանաձև:

62

**Ընտրել ճիշտ պնդումները.**

- 1) Ք. ա. 5 թ. Օկտավիանոս Օգոստոսը մեծ բանակով Հայաստան է ուղարկել իր որդեգիր Հուլիոս Կեսարին, որը գահընկեց արեց Տիգրան IV-ին:
- 2) Տիգրան III-ի շեշտված հակահռոմեական դիրքորոշման պատճառով Հռոմը նրան գահընկեց արեց և գահ բարձրացրեց նրա կրտսեր եղբորը՝ Արտաշես III-ին:
- 3) Հայաստանը թուլացնելու նպատակով Հռոմը նրանից անջատեց Ատրպատականը և այնտեղ թագավոր կարգեց իր կամակատար Արիոբարզանեսին:
- 4) Արտավազդ II-ը Կրասոսին առաջարկում էր պարթևների դեմ արշավել ոչ թե Հայաստանի հարավով, այլ Ասորիքի անապատներով՝ հուսալով երկիրը զերծ պահել հռոմեացիների ասպատակություններից:
- 5) Պարթևները ոչ միայն չստացան Պոմպեոսի խոստացած տարածքները, այլև Պոմպեոսը ճանաչեց Տիգրան Մեծի «արքայից արքա» տիտղոսը:
- 6) Ք. ա. I դարում ապրած հռոմեացի պատմիչ Տակիտոսը հավաստիացնում է, որ Արտաշատի տեղանքն ընտրել է Կարթագենի հռչակավոր զորավար Հաննիբալը:
- 7) Արտաշես I-ի հանձնարարությամբ Սմբատ Բագրատունի զորավարը

ջախջախել է վրացական բանակը և Հայաստանին է վերադարձրել Գուգարք նահանգը:

63

**Ընտրել սխալ պնդումները.**

- 1) Կիլիկյան Հայաստանում կանցլերի պաշտոնը սովորաբար տրվում էր Սսի արքեպիսկոպոսին կամ կրթված և լեզուներ իմացող այլ հոգևորականի:
- 2) Սպարապետությունը Կիլիկյան Հայաստանում Հեթումյանների ժառանգական պաշտոնն էր:
- 3) Կիլիկյան Հայաստանի բանակում մեծ էր արքունական հեծելազորի հրամանատարի՝ սպասալարի դերը:
- 4) Սպարապետի անմիջական տեղակալը ամիրսպասալարն էր:
- 5) Կիլիկյան Հայաստանի մշտական բանակի կազմակերպումը սկսվեց Հեթումյանների օրոք:
- 6) Հայոց թագավորների և իշխանների հետ Հայաստանից Կապադովկիա, Կիլիկիա և Հյուսիսային Միջագետք էր տեղափոխվել նաև նրանց ռազմական ուժերի մի մասը:
- 7) Կիլիկյան Հայաստանի բանակում հատուկ տեղ էր զբաղեցնում հոգևորասպետական միաբանությունների գործերը:

64

**Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

- 1) Աղաբաբյան դպրոցը հատկապես մեծ ճանաչում է ձեռք բերել Խաչատուր Աբովյանի տեսուչ եղած ժամանակ:
- 2) Լազարյան ճեմարանը ժամանակին եղել է Օսմանյան կայսրության միակ արևելագիտական բարձրագույն հաստատությունը:
- 3) Առաքել Դավրիժեցու «Գիրք պամութեանց»-ը տպագրվել է հեղինակի կենդանության օրոք:
- 4) Ստեփանոս Պալասանյանը հետևել է ժամանակին մեծ համարում ստացած այն հայեցակետին, ըստ որի՝ մարդկային հասարակության զարգացման հիմնական գործոնը աշխարհագրական դիրքն է:
- 5) Միքայել Չամչյանի «Պատմութիւն Հայոց» աշխատությունը, ինչպես Խորենացու «Հայոց պատմությունը», ամբողջական պատկերացում է տալիս հայ ժողովրդի անցած ուղու մասին:
- 6) XIX դ. կեսին ասպարեզ են իջնում բնակարիչ Մկրտում Հովնաթանյանը և նրա որդիները՝ Հակոբն ու Աղաթոնը:
- 7) Ղուկաս Ինճիճյանը ամենայն մանրամասնությամբ անդրադարձել է հին և նոր Հայաստանի նահանգների, բնակավայրերի, դրանց բնակչության ու տեղագրության հարցերին:

65

**Տրված իրադարձություններից որո՞նք են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Տիրանի օրոք Հուսիկ կաթողիկոսի նահատակվելը

- 2) Տիրանի թոռների վերադարձը Հայաստան
- 3) Դատարեն Բզնունու և Բակուր բդեշխի մահապատիժը
- 4) Սպարապետ Վաչե Մամիկոնյանի նահատակվելը
- 5) Հայ եկեղեցու առաջին ժողովի գումարումը
- 6) Արշակավանի հիմնումը
- 7) «Ամոթալի» պայմանագրի կնքումը

66

**Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Էսեռների հետ ՀՅԴ-ի կռալիցիոն կառավարություն կազմելը
- 2) Արևմտահայերի 2-րդ համագումարը Երևանում
- 3) Լոռուց, Ախալքալաքի և Ախալցխայի գավառներից թուրքական զորքերի հեռանալը
- 4) Ալեքսանդր Խատիսյանի գլխավորած կառավարության հրաժարականը
- 5) Հայկական ուժերի առաջանալը դեպի Հյուսիսային Լոռի և մինչև Բոլնիս-Խաչեն ու Շուլավեր հասնելը
- 6) Հայ ժողովրդական կուսակցության 2-րդ համագումարը

--	--	--	--	--	--

67

**Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Մելիք Մանուչարի մասնակցությունը Նադիրի՝ Հնդկաստան կատարած արշավանքին
- 2) Ստեփանոս Շահումյանի՝ Սյունիքից Վրաստան մեկնելը
- 3) Իսրայել Օրու վերադարձը Սպահանից
- 4) Արցախի անջատումը Գանձակի խանությունից
- 5) Հայազգի Իվան Կարապետի ժամանումը Արցախ
- 6) Եղվարդի թուրք-պարսկական ճակատամարտը

--	--	--	--	--	--

68

**Կատարել համապատասխանեցում.**

- |  |            |
|--|------------|
| ա. Ստալինի անձի պաշտամունքի բացահայտ դառնալը   | 1) 1930 թ. |
| բ. Խորհրդային Հայաստանում որպես «կուլակ» 1100 տնտեսության ունեզրկումը                                      | 2) 1926 թ. |
| գ. Ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի՝ «Նոր եկեղեցի» կազմակերպության պառակտիչ գործունեության դատապարտելը | 3) 1938 թ. |
| դ. կաթողիկոս Խորեն Մուրադբեգյանի սպանությունը  | 4) 1925 թ. |
| ե. ԽՍՀՄ տարածքում Հնչակյան կուսակցության գործունեության դադարեցումը  | 5) 1924 թ. |
| զ. ՀԿԵՄ-ի ստեղծումը  | 6) 1929 թ. |
|  | 7) 1921 թ. |

ա	բ	գ	դ	ե	զ

69

Հայոց արքաների անունները համապատասխանեցնել իրենց կառուցած քաղաքների անվանումներին.

ա. Սամոսատ

բ. Տուշպա (Վան)

գ. Մծուրք

դ. Էրեբունի

ե. Ջարիշատ

զ. Բագարան

1. Երվանդ IV

2. Շամ

3. Արգիշտի I

4. Վաղարշ I

5. Սարգուրի I

6. Արտաշես I

7. Սանատրուկ

ա	բ	գ	դ	ե	զ

70

Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Վաղ միջնադարյան Հայաստանում հողատիրության ձևերից էր գանձագին կոչվածը. այդ կարգի հողերը մասնավոր էին ու ենթակա առուվաճառքի:
- 2) Բագրատունիների հայոց թագավորության անկումից հետո պահպանված հայ նախարարական համակարգը ուշ միջնադարում դարձավ հայոց անկախ պետականության կրողն ու պահապանը:
- 3) Հորից որդուն ժառանգաբար անցնող խոշոր մասնավոր հողերը կոչվում էին հայրենիք:
- 4) Մեծ Հայքի գերագույն տերը Արշակունյաց շրջանում աշխարհաժողովն էր:
- 5) Բագրատունիների օրոք պահպանվեց Արշակունյաց ժամանակաշրջանին այնքան բնորոշ հակասությունը թագավորի և եկեղեցու միջև:
- 6) Սյունի, Կադմեա, Գուգարաց, Բագրատունի նախարարները կոչվում էին բյուրավորներ: